ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ք.Վայք 29 ՀՈՒՆՎԱՐԻ 2013թ.

Սույն թվականի հունվարի 29-ին ժամը 15:00-ին Վայքի քաղաքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանրային քննարկում:

Օրակարգում.

1. Համայնքի ղեկավարի 2012 թվականի կատարած աշխատանքների հաշվետվություն:
   /զեկ. Հ.Սարգսյան/
2. Կատարվելիք ծրագրերի ներկայացում:
   /զեկ. Հ.Սարգսյան/
3. Համայնքի 2012 թվականի բյուջեի կատարման ընթացքի մասին:
   /զեկ. Ն.Հովհաննիսյան/
4. Համայնքի 2013թ. բյուջեի ներկայացում:
   /զեկ. Ն.Հովհաննիսյան/

Նիստը նախագահում է համայնքի ղեկավար Հ. Վ. Սարգսյանը, արձանագրում է աշխատակազմի քարտուղար Գ. Մուշկամբարյանը: Նիստին մասնակցում են Վայոց Ձորի մարզպետ Է. Ղազարյանը, մարզպետի տեղակալներ Ս. Թարվերդյանը, Ա Գրիգորյանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարները, հաշվապահները, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ:

1. Համայնքի ղեկավար Հ.Սարգսյանը ներկայացրեց 2012 թվականի ընթացքում կատարված աշխատանքները. /ներկայացվում է ստորև/.

ա/ Վայքի քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 4/չորս/ բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում:

բ / <<Քաունթերփարթ>> արտասահմանյան կազմակերպության հետ համագործակցություն, որի արդյունքում կազմակերպության և քաղաքապետարանի համաֆինանսավորմամբ վերանորոգվում է Մշակույթի տան փոքր դահլիճը:

գ/ Երիտասարդական փողոցի հիմնանորոգում

դ/ Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 47 բնակ. շենքի հարակից տարածքում առկա քանդված աստիճանավանդակների վերանորոգում:

ե/ Երևան-Մեղրի միջպետական ճանապարհի Վայքի հատվածի հենապատի կառուցում:

գ/ գերեզմանատան հրաժեշտի քարի ծածկի կառուցում և գերեզմանատան էլ. էներգիայի ապահովում
է/ Շահումյան 102, 97,95, 99, 104 բազմաբնակարան շենքերի հարակից տարածքի փոսային ասֆալտապատման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի աշխատակազմին տրվել է թվով 1186 հանձնարարականներ, որոնց բոլորին տրվել է համապատասխան ընթացք: Կայացվել է համայնքի ղեկավարի թվով 95 որոշումներ, 22 կարգադրություններ, անցկացրել է ավագանու 6 նիստեր:
Համայնքի ղեկավարը ներկայացրեց նաև համայնքի տարածքում գրանցված քաղաքացիական կացության ակտերի համառոտ նկարագիրը.

Տարին	Ծնունդ որից Վայքում	Մահ որից Վայքում	Ամուսնություն որից Վայքում	Ամուսնալուծություն որից Վայքում
2011թ.	160/60	107/42	85/44	19/14
2012թ.	154/58	111/39	89/43	12/7

2. Համայնքի ղեկավար Հ.Սարգսյանը ներկայացրեց 2013թվականին կատարվելիք հետևյալ ծրագրերը.

- Համայնքի մնացած չլուսավորված փողոցների արտաքին լուսավորություն:
- Համայնքի տարածքում գտնվող հեղեղատարների մաքրում և սանիտարական աղբի հեռացում:
- Համայնքի տարածքում փոսային ասֆալտապատման աշխատանքներ մնացած բազմաբնակարան շենքերի բակային հատվածների:
- Մնացած բազմաբնակարան շենքերի տանիքների և մուտքերի վերանորոգում:
- Ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում:
- <<Վայքի քաղաքային համայնքի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ջեռուցում:

3. Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխ. մասնագետ-ֆինանսիստ Ն.Հովհաննիսյանը ներկայացրեց համայնքի 2012թվականի բյուջեի կատարման մասին/կցվում է/:
4. Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխ. մասնագետ-ֆինանսիստ Ն.Հովհաննիսյանը ներկայացրեց համայնքի 2013թվականի բյուջեն:
Համայնքի ղեկավարի 2012 թ. կատարած աշխատանքները գնահատվեց բավարար և ընդունվեց ի գիտություն: Օրակարգում նշված հարցերի շուրջ առարկություններ չեղան:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Մ.Մուշկամբարյան

29.հունվարի 2013թ.